

**CONCOURS D'ENTREE 2019**

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ**

**ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ**

**20/06/2019**

**Temps imparti / Ժամանակը: 3 heures / 3 ժամ**

**Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:**

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

**Առաջադրանք 1. (20 միավոր)**

1.1. առաջադրանքը գնահատվում է 18 միավորով: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:

1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորներով:

**Առաջադրանք 2. (11 միավոր)**

2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

2.2. և 2.3. առաջադրանքների համար տրվում է 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

**Առաջադրանք 3. (11 միավոր)**

3.1., 3.2., 3.3. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

3.4. առաջադրանքը գնահատվում է 2 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով:

**Առաջադրանք 4. (10 միավոր)**

4.1. առաջադրանքը գնահատվում է 2 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով: 4.2., 4.3. առաջադրանքները գնահատվում են 4-ական միավորներով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

**Առաջադրանք 5. (8 միավոր)**

5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով: 5.3., 5.4., 5.5., 5.6. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորներով:

*Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:*

## **Առաջադրանք 1 (20 միավոր)**

### **1.1. Անհրաժեշտության դեպքում գրել տառերը և կետադրել տեքստը (18 միավոր):**

Լուսնի շառագույն սկավառակը երևաց Այծեմնասարի հետևից. Գեղամա մթամած ծովակն սկսեց լուսավորվել: Ճգնավորները՝(,) օրվա բազմանվագ ժամասացությունից հոգնաբեկ, փակվել էին տամուկ խցերի մեջ և հանգստանում էին: Միայն կղզու արևելյան կողմը բարձրացող գմբեթարդ բլրակի վրա լռելյայն անցուդարձ էր անում պարթևահասակ մի տղամարդ: Երևում է՝ օտարական էր: Պարթև հասակը և սիգաճեմ քայլվածքը ցույց էին տալիս, որ օտարականը վանական մթնոլորտին անընտել մարդ է:

Երկար անցուդարձ անելուց հոգնած՝ նա նստեց բարձրավանդակի՝ միջնաբերդ հիշեցնող լերկ ծայրին, ուր ժայռերը, ծովի ընդերքից ելնելով, բարդ-բարդ կուտակվում էին միմյանց վրա ու զորավոր ամբարտակներ կազմելով՝ շրջափակում կղզու արևելյան ու հարավային կողմերը:

Ապառաժի բարձունքին նստած(՝) անձանոթը ակնդետ նայում էր ծովակի այդ տեսարանին, որ ակնապարար ու խաղաղավետ էր, և մտածում Աստծո արարչագործության մասին: Նրան թվում էր՝ հենց այդ վայրկյանին, երբ բնությունը նիրհում է անդորր քնով, ելնում են թաքստոցից չարության ոգիները, կամ աշխարհ են իջնում հրեշտակները՝ տնօրինելու տկար մահկանացուների վիճակը՝ մեկին տալով բախտ ու երջանկություն, մյուսին՝ վիշտ ու տառապանք:

### **1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (1 միավոր):**

1)ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՅԻ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱ, ՄԵԾ ՀԱՅՔ

**2) ՄԻՐԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ, ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆ, ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀ,  
ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ**

3) ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ,  
ՓՈՔՐ ԱՍԻԱ

4) ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, ԻՎԱՆ ԱՀԵՂ, ԾԱՂԿՈՒՆՅԱՅ  
ԼԵՌՆԱՇՂԹԱ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր):

- 1) խոսքի (մասային), ափ (հանել), լույս (ընծայում), զին (դատախազ), տարեց (տարի)
- 2) խոտ (հարք), հազիվ (հազ), ուր (որ) է, առ (ձեռն), ձեռք (բերովի)
- 3) նոր (զվինեական), ժամ (առ) ժամ, տնե (տուն), տնից (տուն), երեք (հարկանի)
- 4) վեց (մետրանոց), նոր (խարբերոցի), ժամկետ (անց), ամսե (ամիս), ձեռք (սեղմում)

## Առաջադրանք 2 (11 միավոր)

2.1. Տրված սյունակներից համապատասխան արմատներ ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ կազմել վեց բարդ բառ (3 միավոր):

Որթատունկ	հուղարկավորություն	<b>որթակոտոր</b>
խնամք	մուրհակ	<b>մայրախնամ</b>
երեսպաշտ	կոտորած	<b>դարձերես</b>
հանցապարտ	մայրապետ	<b>պարտամուրհակ</b>
կալանավոր	ամբոխավար	<b>ուղեկալ</b>
խառնիխուռն	դարձդարձիկ	<b>խառնամբոխ</b>

2.2. Ընդգծել ութ բառ, որոնցում **-ն** հնչյունախումբն ածանց է (4 միավոր):

**Գողոն**, կերոն, միլիոն, **զեղոն**, քանոն, **պաշտոն**, գայլիկոն, **թերթոն**, **կռճոն**, մակարոն, հորիզոն, **կտրոն**, կանոն, **ծամոն**, պարոն, **գործոն**:

2.3. Ընդգծել երկու ածանց ունեցող ութ բառ (4 միավոր):

**Երբեմնի**, **արտատոց**, համառոտ, **ունակություն**, համարյա, **հակընդդեմ**, **հատորյակ**, առարկա, **ժանիքավոր**, անդրաշխարհ, օդապարիկ, բարունակ, **հաղորդում**, դիմացի, անվանի, **տափակավուն**:

### **Առաջադրանք 3 (11 միավոր)**

**3.1. Ընտրել և գրել հումանիշների վեց գույգ (3 միավոր): Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:**

Պատասպարվել, տամկանալ, որոնել, գայթել, կշտամբել, մոլորվել, օթևանել, շեղվել, հանդիմանել, պրպտել, սայթաքել, թրջվել:

**պատասպարվել - օթևանել**

**տամկանալ – թրջվել**

**որոնել – պրպտել**

**գայթել – սայթաքել**

**կշտամբել - հանդիմանել**

**մոլորվել – շեղվել**

**3.2. Ընտրել և գրել հակահիշների վեց գույգ (3 միավոր): Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:**

Մղել, վառել, պառակտել, ժպտալ, դրվատել, մոլեգնել, խոժոռվել, հանդարտվել, միավորել, կասեցնել, շիջել, պախարակել:

**մղել – կասեցնել**

**վառել – շիջել**

**պառակտել – միավորել**

**ժպտալ – խոժոռվել**

**դրվատել - պախարակել**

**մոլեգնել - հանդարտվել**

**3.3. Կազմել վեց նախադասություն հետևյալ համանուններով՝ թռուցիկ-թռուցիկ, անցավ-անցավ, տոն-տոն՝ պահպանելով ձևական նմանությունը (3 միավոր): Յուրաքանչյուր ճիշտ նախադասություն գնահատվում է 0,5 միավորով:**

**Ա) Նա թռուցիկ հայացք գցեց ընկերոջ կողմը: Երիտասարդը տուն մտավ՝ ձեռքին թռուցիկ:**

**Բ) Ժամանակակից բժշկությունը կարողանում է անցավ վիրահատություններ կատարել:**

**Մանկությունն անցավ մի ակնթարթի պես:**

**Գ) Մայրը որդուն խնդրեց չբարձրացնել ձայնի տոնը: Անկախության տոնը նշվեց մեծ շուքով:**

**3.4 Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):**

- ա) փուշը մատից հանել – օգնել, քիթը բարձր – գոռոզ, քիթը կախ – տխուր
- բ) կաշվից դուրս գալ – փախչել**, հոգու հետ խաղալ – կատակել, մի բուռ – կուչ եկածզ) ծանր ականջ – կիսախուլ, կողը հաստ – քմահաճ, ճակատը պարզ – պարզերես
- դ) չար աչք – չարակամ, քիթը քարին առնել – ձախորդության հանդիպել, ուղտի համառություն – համբերություն
- ե) ծառս լինել – թեքվել**, նեղություն կրել – չարչարվել, ներս գցել – թաքցնել
- զ) փափուկ սիրտ – նրբազգաց, բռան մեջ առնել – ենթարկել, կողի ընկնել – համառել

**Առաջադրանք 4 (10 միավոր)**

**4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր):**

- ա) Մի հրեա, ըստ երևույթին վաճառական, խոնարհված գորգերի վրա, քննախույզ (**դիտում**, դիտարկում) և մատները սահեցնում էր զարդանախշերի վրայով, շոշափում ընտիր բուրդը:
- բ) (**Ձուրկ**, գերծ) լինելով կանացի ամոթխածությունից՝ Շամիրամը պատգամավորներ է ուղարկում Արայի մոտ՝ ամուսնության առաջարկությամբ:
- գ) Մի չարագույժ լուր (**խտովեց**, խտովվեց) Այվագովսկու հոգու անդորրը:
- դ) Բարձունքում հետզհետե (լուծարվում, **լուծվում**) էր թանձր մառախուղը:

**4.2. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):**

Առանց գլխարկ, **հորատանցքեր**, **ըստ սովորության**, մի՛ խոսի, **կայագորներ**, ըստ երևույթի, **ծխանցքեր**, ոչ ոքու, **կպել է**, **դրանով հանդերձ**, կողմնացույցեր, **ասածին հակառակ**, **թռչում եմ**, հողամասներ, ձեզ վրայով, դառել ես:

**4.3. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):**

- ա) Նա **երեխաներից** ամենափոքրն էր, և իբրև ընտանիքի **կրտսերի**՝ ծնողները նրան ավելի շատ էին սիրում ու **չէին ընդդիմանում** նրա որևէ ցանկության, նույնիսկ երես էին տալիս՝ **չմտածելով** հետևանքների մասին:

(կրտսեր, ընդդիմանալ, երեխա, մտածել)

բ) Միջին **դարերում** Հայաստան այցելած եվրոպացի **ուղեգիրները** պատմել են ոչ միայն **իրենց** աչքով **տեսած** իրադարձությունների մասին, այլև հաճախ անհավատալի, զարմանահրաշ ղիպաշարեր՝ բազմազան ու հետաքրքրական:

(ինքը, տեսնել, դար, ուղեգիր)

### **Առաջադրանք 5 (8 միավոր)**

**5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրատրոյան սխալ կա և ուղղել սխալները (2 միավոր):**

**ա)** Երբեք չպետք է բաց թողնել հնարավորությունը հմտանալ **ու** համակարգչային գործերում:

բ) Նրա հաջողություններն ու անհաջողությունները կախված էին գործերի անհաջող ընթացքից:

գ) Մինչ Անթեյը փորձեր էր անում ազատվելու, ուժերն աստիճանաբար նվազում էին:

**դ)** Երբ մարդիկ սկսեցին խոսել տարբեր լեզուներով, դադարեցին իրար հասկանալ **ուց**, ու ստեղծվեց մի ընդհանուր իրարանցում:

**5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա և ուղղել սխալները (2 միավոր):**

**ա)** Աշխատակիցների մեծամասնությունը, իրավիճակին անտեղյակ լինելով, չկարողացա **և** որևէ պատասխան տալ տնօրենի հարցադրումներին:

բ) Հիմալայները ձգվում է Արևելքի մի շարք պետություններով:

գ) Ինձնից՝ որպես փորձառու մասնագետից, միշտ ավելին են պահանջում:

**դ)** Այժմ ազգին հարկավոր **էեն** ոչ միայն սնունդ ու ջերմություն, այլ նաև հոգևոր սնունդ՝ արվեստ ու գրականություն:

**5.3. Նշել բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):**

Հրատարակված գիրքն ուղղված է երեխաներին և այն ընթերցողներին, ովքեր սիրում են ֆանտաստիկ գրականություն:

ա) Հրատարակված գիրքն ուղղված է ֆանտաստիկ գրականություն սիրող երեխաներին և ընթերցողներին:

բ) Հրատարակված գիրքն ուղղված է երեխաներին և ֆանտաստիկ գրականություն սիրած ընթերցողներին:

**զ) Հրատարակված գիրքն ուղղված է երեխաներին և ֆանտաստիկ գրականություն սիրող ընթերցողներին:**

դ) Գիրքը, որ հրատարակվել է, ուղղված է երեխաներին և ֆանտաստիկ գրականություն սիրող ընթերցողներին:

**5.4. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):**

Չնայած գեղանկարիչ չլինելուն՝ Վիլյամ Սարոյանն իր հոտառությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

ա) Թեև Վիլյամ Սարոյանը գեղանկարիչ չէր, իր հոտառությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

**բ) Թեև գեղանկարիչ չէր, Վիլյամ Սարոյանն իր հոտառությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:**

գ) Չլինելով գեղանկարիչ՝ Վիլյամ Սարոյանը հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները, քանի որ ուներ նուրբ ճաշակ ու հոտառություն:

դ) Եթե գեղանկարիչ էլ չէր, Վիլյամ Սարոյանն իր հոտառությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

**5.5. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):**  
\_ Ես սիրում եմ քեզ պես մարդկանց,- ասաց Մարութխանյանը Միքայելին և ապա ավելացրեց,- դիզում ես, ինձ խաբում, և միայն ծույլերը կարող են քեզ ազահ ասել:

ա ) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ դիզում է, նրան խաբում, և միայն ծույլերը կարող են նրան ազահ ասել:

բ) Մարութխանյանը Միքայելին ասաց և ապա ավելացրեց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, նա դիզում է, իրեն խաբում, և միայն ծույլերը կարող են նրան ազահ ասել:

**գ) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նա դիզում է, իրեն խաբում, և միայն ծույլերը կարող են նրան ազահ ասել:**

դ) Մարութխանյանը Միքայելին ասաց , որ նա սիրում է իր պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նա դիզում է, իրեն խաբում, և միայն ծույլերը կարող են իրեն ազահ ասել:

**5.6. Նշել անուղղակի խոսքն ուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):**  
Վեհափառն ասաց հոգևոր հայրերին, որ պետք է դուրս գան իրենց խցերից, հազուստ տրամադրեն որբերին ու նրանց համար ուտելիք հայթայթեն:

ա) Վեհափառն ասաց.

-Հոգևոր հայրեր, պետք է դուրս գաք իրենց խցերից, հազուստ տրամադրեք որբերին ու նրանց համար ուտելիք հայթայթեք:

բ) Վեհափառն ասաց հոգևոր հայրերին.

-Դու՛րս եկեք ձեր խցերից, հազու՛ստ տրամադրեք որբերին ու նրանց համար ուտելի՛ք հայթայթեք:

**գ) Վեհափառն ասաց հոգևոր հայրերին.**

**-Դուք պետք է դուրս գաք ձեր խցերից, հազուստ տրամադրեք որբերին ու նրանց համար ուտելիք հայթայթեք:**

դ) Վեհափառն ասաց հոգևոր հայրերին.

-Դուք պետք է դուրս գաք ձեր խցերից, պետք է հազուստ տրամադրեք որբերին ու նրանց համար պետք է ուտելիք հայթայթեք: